

## «ԱՆԱՀԻՏ» ՀԱՆԴԵՍԻ 100-ԱՄՅԱԿԸ

Բանասիր գիտ. դոկտոր Կ. Լ. ԴԱՂԱՔՅԱՆ

Արշակ Չոպանյանի «Անահիտ»<sup>1</sup> հանդեսը պատվավոր տեղ է դրավում հայ մամուլի պատմության մեջ: Լույս ընծայվեց երկու շրջանում՝ 1898—1911 և 1929—1949 թթ.: Հայ ժողովրդի պատմության մեջ այդ երկու ժամանակահատվածները ունենին տարբեր բովանդակություններ, որ կապված էին քաղաքական ուրույն պայմանների հարուցած առաջադրանքների հետ: Երկրորդ շրջանում հայ ժողովուրդը ուներ իր պետականությունը՝ Խորհրդային Հայաստանը, որը ազդի գոյատևման ու բազմակողմանի զորացման հիմնական հոգսը, բնականաբար, վեոցոբյ էր իր վրա: Առաջին շրջանը աղյի ֆիզիկական իսկ դորության համար մաքառումների կրիտիկական ժամանակահատվածներից մեկն էր, երբ հայ ժողովրդի ճակատագրի խնդիրները քննարկվում էին դեզերող քաղաքական մտքերի կածաններում, որոնք հաճախ միմյանց խոտոր էին ընթանում, իսկ դործնական վճիռները իրականացվում էին տարանջատ, հաճախ միմյանց նկատմամբ անհաշտ քաղաքական ուժերի ջանքերով: Օբյեկտիվ իրակտություններ ստեղծված այս կացությունների բերումով էլ առաջին շրջանի «Անահիտին» վիճակվեց շատ ավելի խոր և համապարփակ դործունեության դաշտ:

Ա. Չոպանյանը իր ամբողջ դիտակցական կյանքը, բազմաբեղուն դործունեությունը նվիրաբերեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հաղթանակին: Նրա ինքնագրոշմ դրականությունը և խորագիտակ դրականագիտությունն ու բանասիրությունը, հայ մշակույթի անխոնջ քարոզչությունը Եվրոպայում և համաշխարհային մշակույթի տարածումը մեր իսկ շրջանում, քաղաքական-հասարակական աննկուն դործունեությունը, տասնյակ սարինների լրագրությունն ու հրապարակախոսությունը, այս ամենը նա ի սպաս դրեց իր դերաշունջն նպատակին: Հայ ժողովրդի դործին ծառայելիք եղավ նրա հավատ հանգանակը, իսկ իրացման խողովակը՝ «Անահիտ» հանդեսը:

Առաջին իսկ համարներից մեկում Չոպանյանը անթաքույց բացահայտում է իր կետ-նպատակին: «Այնպիսի ատեն մը, երբ մեր ազգային գոյությունը վտանդի մեջ է,—դրում է նա,—բնական է, որ մտավորական, գեղեցկագիտական բոլոր ճիգերեն ու ձևարկներեն առաջ, ամեն հայու ամենսկենսական մտահոգությունը պետք է ըլլա այն խնդիրը, որ հայ ազգին մահու և կյանքի խնդիրն է, և շատ բնական է, որ այդ խնդրույն քննությունը ամենամեծ և ամենակարևոր տևող մը բռնեք ուսումնասիրությանց մեջ «Անահիտ» պես ամսաթերթի մը, որուն նպատակն է իր ուժերուն շափովը հայցեղին զորացմանն ու դարացմանը նպաստել»<sup>2</sup>:

Հանդեսի բնութագրական հատկանիշն էր լավատեսական ողին, որն արտահայտվում էր նրա բազմաճյուղ բովանդակության բոլոր ուղղություններում: Հենց խմբագիրը ինքը մի նամակում նշում է. «Անշուշտ, իրավունք

<sup>1</sup> Հանդեսը անվանակոչվել է ի պատիվ մի օրիորդի, որին անպատասխան սիրում էր երիտասարդ Չոպանյանը: Նրա կենսագրության այդ ձախող էջը նկարագրված է ինքնակենսագրական բնույթի «Բուղիին փառք» վիպակի մեջ:

<sup>2</sup> «Անահիտ», Ա տարի, 1899, № 12, էջ 390:

ունեք մտածելու, թե հայ աղզը այսօր ողբալի վիճակի մեջ է և կարելի չէ իրապես լավատես հայեցվածք մը ունենալ անոր կացութեան մասին: Բայց, որովհետև այդպես է, մի՞թե պետք է թաղվել մե՛սը վհատեցուցիչ, կործանարար հոռետեսութեան մը մեջ.—ամսաթերթ մը մանավանդ, ինչպես «Անահիտը», որ կուղղվի ամեն կողմ օտարութեան մեջ բաված հայերու, պարտք ունի սիրտ տալ, հույս հերշնչիլ,—չեմ ըսեր, որ պետք է ստել, թե պետք է ծածկել իսկութունը, ոչ, այդ վտանգավոր կըլլար, պետք է հայտնել կացութունը իր բոլոր ուսունութեամբ, և այդ ըրած եմ, կրնեմ, բայց նույն ատեն պետք է ի վեր հանել և շեշտել այն բոլոր կենդանութեան, կորովի նշանները, զոր մեր ժողովուրդը ցույց կտա այս միջոցիս, քաջալերել զինքը իր անվհատ, համառ կենսականութեան ու հավատքին մեջ...»<sup>3</sup>:

Հանդեսն ծրագրի հիմնախարհիս չայ ժողովրդի ազատագրութեան գաղափարխոսութեանն էր, որի ատաղձը՝ հայ միտքը զարգացնելու ճանապարհով ժողովրդի ինքնաճանաչութունը գարգացնելու գաղափարն էր: Հենց ինքնաճանաչութեան վրա պիտի, ըստ Չոպանյանի, կառուցվել կոնսոլիդացիայի շինքը, որովհետև հենց կոնսոլիդացիան, ազգային միասնութունն էր ազգային-ազատագրական պայքարի հաջողութեան թե հողը և թե զինանոցը: Պատահական չէ, որ հանդեսի էջերում մեծ տեղ են գրավում մեր Բաղաճախի և միտքը պեղող նյութերը<sup>4</sup>: Հանդեսն էջերում հստակ ու վստահարար պաշտպանվում է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը: Ի տարբերութուն, սակայն, ժամանակի որոշ պարբերականների, այստեղ լուրջ տեղ է գրավում վերլուծական-քննադատական խոսքը: Քննադատութունը ուղղված է ոչ թե շարժման էության, այլ նրա իրականացման և ղեկավարման տակտիկայի, տեղ գտած սխալների դեմ: «Իր թերութիւնները տեսնելը առաքինութիւն մըն է անշուշտ ազգի մը համար,—կարողում ենք հանդեսի առաջին իսկ համարում իբրև ծրագրային ուղենիշ,—բայց իր թերութիւնները առպտելու դոճոճողութեան մեջ ուշանալն ու անկից ախորժիր վտանգավոր հիվանդութիւն մըն է»<sup>5</sup>:

Ա. Չոպանյանի գրչին է պատկանում 1878 թ. Բեռլինի իրադարձութիւններին խոր ու մանրակրկիտ քննարկումը, որը նա կատարեց գեպարից քսան տարի անց, ինքն իսկ գարմանք հայտնելով, որ մինչ այդ ոչ որի մտքով չէր անցել նման կարգի քննութիւն անել: Ինչո՞ւ, այնուամենայնիվ, անհրաժեշտութիւն ծագեց անդրադառնալու քսան տարի առաջ եղած իրադարձութիւններին:

Վերջին հարյուրամյակի ընթացքում մեր պատմութիւնը այնպիսի մի օրհնաշափութիւն է ստեղծել, որ յուրաքանչյուր հանգուցային պահին հայ Հասարակական միտքը միշտ դարձել է նույն խնդրին. արդո՞ր ճիշտ էր հայ ժողովրդի ուսական կողմնորոշումը երեք հարյուր տարիներին ի վեր: Մեր մեծերը Առավելանից մինչև Թումանյան առանց վարանելու դրանք են պատասխանել այդ հարցին: Բայց տճա մեր ուրի քսանակուն թմուկաններն «Հայրենիք» ամսագիրը հրապարակ տվեց Ռուբեն Դարբինյանի ժխտողական տեսակետին: Նա արմատից սխալ էր համարում ուսական կողմնորոշումը. այդ կողմնորոշման ջատագովներին կոչում էր «ուսական սայլին Խապովի տղամիտներ», պահանջում էր հրաժարվել դրանից և լեզու գտնել Թուրքիայի հետ: Նույն կուսակրութեան ուրիշ դոճոճներ, սակայն, կտրակալապես մեղծում էին Ռ. Դարբինյանի Հայտքները: Հովհաննես Քաջազնունին ուղղակի ոտն էր հարյը. «Ռուսաստան թե Թուրքիա» և միանշանակ շեշտը դրեց առաջինի վրա:

<sup>3</sup> ԳԱԹ, Խաչատուր Հովհաննիսյանի ֆոնդ, № 64:

<sup>4</sup> Բացահայտ քաղաքական դիրքորոշման պատճառով «Անահիտ» մուտքը Թուրքիա և Ռուսաստան արդելվեց, իսկ Թուրքիան էլ Ֆրանսիական դեսպանից պահանջեց երկրից վտարել Ա. Չոպանյանին:

<sup>5</sup> «Անահիտ», Ա տարի, 1898, № 1, էջ 3:

Ա. Չոպանյանի ժամանակահատվածն էլ հանգուցային էր, և Չոպանյանն էլ պատասխան էր փնտրում «ո՞րն է ելքը» հարցին: Եվ այդ հարցի հստակ ու մեկին պատասխանը նա տալիս էր հենց իր վերլուծությունում: Ընդամին, վերլուծությունը տանում էր մի հունով, որով անցյալ դարի 90-ական թթ. հայ ազգային-ազատագրական պայքարի սխալները բացատրում էր 70-ական թթ. վերջերին թույլ տված սխալներով, առաջինը դիտարկում էր իրրև վերջինի հետևանք: Եվ այդ սխալների հիմնական բովանդակությունը նա կապում էր ժողովրդի ու շարժման ղեկավարների քաղաքական կողմնորոշման հետ:

Ըստ «Անահիտում» հրապարակված վերլուծության, Սան-Ստեֆանոյի ժամանակահատվածի էական հատկանիշը դեպի Ռուսաստան արևմտահայության կտրուկ շրջադարձն էր: Սան-Ստեֆանոյի ժողովին ուղղած դիմումով ներսես Վարժապետյան պատրիարքը իր «փառքի տիտղոսը» ստեղծեց, կարգում ենք հանդեսում, «նոր թվական մր բացավ հայ ժողովրդին. կրոնական դոյություն ունեցող աղբյուր քաղաքական կովանի վրա մը դրավ, հայուն շահերուն եվրոպական հզոր պաշտպան մը գտավ Ռուսը»<sup>6</sup>:

Բայց ահա, երբ ներսես պատրիարքը լիազորություններից զրկում է Պետերբուրգ մեկնած պատվիրակությանը, դրանով իսկ ձախողում է ռուսական կառավարության հովանավորությունը ստանալու «սքանչելի» գաղափարը, սկսվում է ճակատադրական սխալների մի ամբողջ շարան, որոնք տեղ էին դառնում թուրք կառավարության դրդումով: «Եվ ահա առաջին ոճիրը,— շարունակում ենք կարդալ հանդեսում,— հայ ազգին դեմ գործված»<sup>7</sup>: Այդ քայլով հնարավորություն է ընձեռնվել Անգլիային «ռուսին առջև պատնեշ կանգնեցնելու համար» և մերժվել էր «այն գորությունը, որ հայոց պաշտպանությունը առանձնաձև էր դրակալե հողիլ: ծով մը. և այն գորությունը, առանց որուն կամ էին անհնար է, որ հայոց բախտը վնուվի»<sup>8</sup>:

Հանդեսը համոզված էր, որ անգլիական դիվանագիտությունը իր հակառուսականության բերումով «թշնամի էր հայոց ներքին ամենեն սուրբ բաղձանքներուն, մինչ ռուսը իր շահերուն բերմամբ դաշնակից էր հայուն»: Եվ անվարան դատապարտում էր «հայ պալիտիկոսներին», որոնք «կը նախընտրեին թուրքը ռուսեն», որը արդեն Արևելյան Հայաստանի մի կարևոր մասում հաստատել էր «Ապահովություն: պատվո, կենաց և ընչից»: «Աշխարհում ռուսին տիրացուական վախն է միշտ, որ այդ զգացման խորը կը թաքչի,— շարունակում է հողվածագիրը,— և ծայրահեղ օդային, անհիմ հույս Անգլիո վրա դրված է, որու համեմատ այդ պալիտիկոսները կերազեին ունենալ ինքնավարություն մը շնորհիվ Անգլիո և մինչև իսկ հավանությանը թուրքին»<sup>9</sup>:

Շատ տարողունակ իմաստ է պարունակում վերը բնութագրված «իր շահերուն բերմամբ» բանաձևը: Վերլուծության հեղինակ Չոպանյանը միանշանակ մերժում է որևէ այլ կարգի հարաբերակցություն և ընդունում է միայն շահերի համընկնման սկզբունքը:

Կարևոր է շեշտել նաև հանդեսում հրապարակված այն միտքը, թե հայ ժողովրդի բնաջնջման դադափարը Օսմանյան Թուրքիայում ծնվել էր ոչ թե հայերի անհնադանգության կամ «դրսից թելադրված» այս կամ այն գործողությունները զսպելու նպատակով<sup>10</sup>, այլ որ դա բխում էր թուրքականության իսկ ազգային իդեալի ոգուց: Դեռևս դարասկզբին Ա. Չոպանյանը պարզա-

6 Նույն տեղում, № 3, էջ 80:

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում:

9 Նույն տեղում, Թ տարի, 1907, № 10—12, էջ 165, 162:

10 Մեր օրերում էլ նման կարգի մեկնաբանություններ տեղ են գտնում: 1995 թ. մայիսին Մեծ Եղեռնին նվիրված միջազգային դիտաժողովի ամբիոնից հենց հանրապետության իշխանավորներից մեկի խոսքը, ըստ որի հայերը Օսմանյան Թուրքիայում սպրդում էին բնականոն կյանքով, և նրանց բնաջնջման մեջ մեղավոր էին հրահրող «դրսեցիները»:

բանն է խնդիրը՝ «Անահիտում» հրապարակելով «Բաց նամակ դ-ր Բելքին» հոդվածը: Նա համոզվեցր ցույց տվեց, որ ջարդերի հիմնական պատճառը «հայ խռովարարներու մեկ քանի ապստամբական շարժումները» կամ նույնիսկ քրդական համիդիե զորագնդերը չէին, ինչպես կարծում էր Բելքը: «Այդ երկու իրողությունները ուրիշ բան չեն, բայց եթե ճակատագրական արդյունքը սկզբնական պատճառներու, որոնք նույն ինքն մահմեդական բռնապետության վրա հիմնված թուրք ռեժիմին իսկությունը մեջ կը կայանա. ատոնք բիրտ արտահայտություններ են հիվանդության մը, որուն արմատները կը կայանան ոչ հայ տարրին, ոչ իսկ քուրդ տարրին, այլ թուրք կառավարական դրություն մեջ»<sup>11</sup>:

Գառասկզբին, երբ ռուսական կառավարությունը վարում էր հակահայ քաղաքական արշավ, բռնագրավում էր եկեղեցապատկան ինչքը, հայաժանրների դիմում կրթական գործի մեջ և այլն, շատերը գայթակղություն ունեցան մեղադրականներ կարգալու ռուս ժողովրդի դեմ, նույնացնելով նրան իշխանության հետ: «Անահիտ» խմբագիրը այդ օրերին գրեց իր փայլուն ուսումնասիրություններից մեկը՝ «Ռուսիա և հայերը» խորագրով:

«Ապուշություն է «ռուս» ըսելով շինովնիկներու, կնուտը, Սիպերիան, կախաղանը և բանտերը միայն տեսնել,—կարգում ենք հանդեսում,—ատոնք բոլորը ռուս ռեժիմին բացասական կողմն են...: «Ռուս» ըսելով ես կհասկնամ մանն ինչ, որ ռուս է—Գոգուր. Դոստոևսկին, Տուրգենևը, Տոլստոյը, Գորկին, որոնք մտավորական բարերարներն են ամբողջ մարդկության համար... կը հասկնամ ռուս ժողովուրդին խանդոտ, գաղափարապաշտ, մարդասեր հոգին, կը հասկնամ ռուս գործության կատարած անուրանալիորեն զեղեցիկ ու մարդկօգուտ դերը մահմեդականությունը զսպելու և թուրքի գետի ազգութանց ազատման նպատակով, կը հասկնամ ռուս գիտությունը, գեղարվեստը, կը հասկնամ ռուս ազատագրական շարժման բոլոր հանդուգն ու հոյակապ ճիգերը, բոլոր այն անբաղդատելի հերոսները, զոր տված է ռուս տարրը ազատության դատին համար ու, վերջապես, «ռուս» ըսելով ես միշտ կը հիշեմ բարիքը, զոր Մեծն Պետրոսի ցեղը ըրած է անցյալի մեջ հայության և կը տեսնեմ օգուտը, զոր իմ ազգս կարող է ապագալի մեջ քաղել ռուս գործութենեն»<sup>12</sup>:

Ռուսական կողմնորոշումը մնաց իբրև ստրատեգիական մայրուղի «Անահիտ» ամսագրի համար նաև նրա գոյության երկրորդ շրջանում: Բնականաբար, նման կողմնորոշումն արտահայտվում էր խորհրդային Միության և նրան մաս կազմող խորհրդային Հայաստանի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևով: Իսկ այդ վերաբերմունքի հիմքում ընկած էր խորհրդային Հայաստանի տնտեսական ու մշակութային զարգացման ճշմարտացի գնահատություն: «Այս բոլորի մեջ առգար չէ տեսնել միմիայն արժանիքը մեր ժողովրդին աշխատասեր ու շինարար ոգովուն,—գրում է հանդեսի խմբագիրը,—ատոր մեջ մեծ գեր ունին խորհրդային Միության բարոյական ու նյութական առաջնությունը, ապահովությունը: ու իսկազությունը, զոր միության անդամակցությունը տված է մեր երկրին, այդ բոլոր շինարարական գործերուն մերթ թևադրությունը ու միշտ խոսիսույսն ու օժանդակությունը, զոր մեր ժողովուրդը պատած է Միության Կեղծական կառավարության մոտ: Կուրություն և ապերախություն է ասիկա չմբռնելն: ու չգնահատելը»<sup>13</sup>:

Հետաքրքրություն է ներկայացնում Չոպանյանի պատասխանը քաղաքական հուսալուծողներին, որոնք պնդում էին, թե խորհրդային Հայաստանը կորցնում է իր սուղային դիմագիծը: Հայաստան կատարած իր այցելություններից հետո նա գրում է. «Տիրող կարգերը և մեծամասնականների քաղաքականությունն է, որ ոչ թե կը թուլատրեն, այլ կը պահանջեն կը մղեն ու

11 «Անահիտ», Ռ տարի, 1900, № 3, էջ 88:

12 Նույն տեղում, 1906, է տարի, № 3—5, էջ 70:

13 «Ապագա», ԺԳ տարի, 1933, № 28:

կօզմեն (ընդդեմումն իմն է—4. Դ.), որ միության մաս կազմող Խորհ. Հանրապետությանը յուրաքանչյուրին մեջ տեղական ժողովուրդեն բխած ուժերեն կազմվի այդ ազգային հանրապետությանը կառավարությունը, որ տեղական լեզուն տիրապետել իբրև պաշտոնական լեզու, բնիկ ժողովուրդին տոհմազորոշմ գրականությունն ու արվեստը զարդանան»<sup>14</sup>:

\* \* \*

Ժողովրդի բազմակողմանի լուսավորման գործը «Անահիտ» ծրագրի հիմնական խնդիրներից մեկն էր: Ըստ խմբագրի, դա ազգային միասնության հասնելու գլխավոր ուղին էր, այսինքն ազատագրական պայքարի հիմնական դործունեներից մեկը: Ինչպես և մտահղացված էր, հանդեսը եղավ աշխարհով մեկ ցրիվ հայ մտավորական ուժերի ժամադրավայրը: Հենց մտավոր ներուժի մեկտեղումով, արևելահայ և արևմտահայ հատվածների մշակութային մերձեցման միջոցով պիտի գլուխ գար բաղձալի կոնսուլիդացիան:

«Ջարդացնել ինքնաճանաչությունը,—կարդում ենք հանդեսում,—ցուցնել թե մեր բոլոր թերությունները կուգան գիտակցության շարժությունեն, զգացնել, թե փրկության մեծադույն լծակը բարոյական կրթությունն է, զոր յուրջ հիմերու վրա հաստատված Դպրոցը և անկեղծությամբ, ուսումնասիրությամբ ու խանդով շինված Գրականությունը միայն կրնան տալ մեզի, հարստացնելով հայ միտքը մաքուր, կենսալիք, գեղեցիկ տարրերով, աշխատիլ մանավանդ, որ մեր դրականությունը՝ բարձրագույն արտահայտությունը հայ ցեղին հողովույն, հետզհետե ճոխանա, պայծառանա, ձևացնե տաճար մը վեհօրհայն ու շնորհի, որ կարենա պատվո տեղ մը ունենալ Մարդկային Ոստանին մեջ և որմով հպարտանան մեր վաղվան սերունդները, ջանալ վերջապես, որ ամբողջ ազգը, հակառակ ամեն սլատվարի և անջրպետի, ամուր կապերով եղբայրանա և ներդաշնակվի մեծ, ազնիվ գաղափարի մը շուրջ՝ կամք մարդկության մեջ դեղեցկություն և կյանք ծնուցանող տարր մը ըլլալու: Կհավաստիկ, ինչ որ կը նկատենք նվիրական պարտքը մեր այսօրվան մտավորական դասին և այդ պիտի ըլլա գործը, որուն «Անահիտ» պիտի ձգտի նպաստել»<sup>15</sup>:

Ծրագրային այս կետը «Անահիտը» կատարեց ավելիով թե՛ առաջին շրջանում, թե՛ երկրորդում, և որ հրատարակվում էր իբրև զուտ «հանդես մտածման և արվեստի»: Հանդեսի առաջին իսկ համարից սկսվում է համաշխարհային մշակույթի արժեքավոր էջերը թարգմանաբար հայության ներկայացնելու գործը: Բազմիցս հրատարակվում են ռուսական, եվրոպական և արևելյան նշանավոր հեղինակների գործերը, գրականագիտական-վերլուծական հոդվածներ են տպագրվում օտար գրականությունների վերաբերյալ: Խոսելով ռուսական մշակույթը հայության մեջ տարածելու անհրաժեշտության մասին, հանդեսը նշում է, որ ռուս քաղաքակրթությունը Ասիո վրա տարածվող մտավոր տիրական գործունեյն ըլլալու սահմանված է, և ռուս մտածումն ու ռուս արվեստը պետք է ծանոթ դառնան հայերու ամբողջությանը»<sup>16</sup>:

Մեծ տեղ են գրավում եվրոպական մշակույթին, մասնավորապես դրականությանը հատկացված էջերը: Հանդեսը հատուկ ուշադրություն է նվիրում ռուսական ուղղության գործերի պրոպագանդանը, հատկապես այն գործերի, որոնցում մերկացվում է տիրող իրականության սոցիալական պատկերը: Մի առիթով, օրինակ, դիտվում է, թե «Ձեռպեր, շատ ավելի հառաջ երթալով Բալդակեն, որ արդեն սկսած էր իր հակայական վեպերուն մեջ արդի ընկերության արյունուտ տիղմը քրքրել, արտագրեց դարձ մը անդուժ դիտողություն»<sup>17</sup>:

14 Նույն տեղում, № 29:

15 «Անահիտ», Ա տարի, 1898, № 1, էջ 5—6:

16 Նույն տեղում, 1899, № 5—6, էջ 179:

17 Նույն տեղում, № 2, էջ 63—64:

«Անահիտի» ծրագրի կարևոր մասն է կազմում արևելյան, հատկապես պարսկական, գրականության ընտիր էջերը հայությունը մատուցելու գործը, ինչի դա թարգմանությունների թե մեկնաբանող հոգվածների տեսքով: Մասնավոր հետաքրքրություն է ներկայացնում Գ. Փառնակի (Գառնիկ Ֆնտրզյան) ուսումնասիրությունը Օմար հայամի մասին: Եվ, ինչպես հանդեսի հիմնական ուղղությունն է պահանջում, Փառնակն էլ, հայամի արվեստի այլևայլ բարեմասնությունների կողքին, ընդգծում է դրա սոցիալական շեշտվածությունը: «Արդարև,— գրում է նա,— Օմարի պես արևելքի և ոչ մեկ բանաստեղծ թափած է սաստկահույզ բողոք և սուր երգիծանք շարամիտ, անողոք և անխելքի երկնքի՝ «Ֆելիքի» դեմ»: Հեղինակը բարձր է գնահատում այն հանգամանքը, որ հայամը շատ սակավ դեպքերում, «թերևս հալածանքի սուր տագնապի մը ատենը» համակերպություն է ցույց տալիս տիրող իշխանությունն ու կրոնին ու միշտ «աղքատ դերվիշության կապերտը սուլթանական շքեղությունն... վեր կը դասե»<sup>18</sup>:

Ա. Զոպանյանը իր ամբողջ գործունեությամբ և մասնավորապես «Անահիտով» կատարեց մի վիճիարի պատմական գործ, պեղելով, վեր հանելով է սփռելով Արևմուտքի և մեր իսկ զարմացած հայացքի առջև մի ամբողջ հայկական միջնադարյան քաղաքակրթություն: «Բավական է որքան մուծի ու մոռացության մեջ ենք ձգած մեր նախնայաց քնարին ցարդ անարդարորեն արհամարհված, քիչ կարևոր նկատված այդ արտահայտությունները, որոնք, ընդհանրապես, ըստ իս, ամենին ինքնատիպ, հայագրող էջերն են մեր հին բանաստեղծության,— գրում է նա:— Այն պահուն, ուր փրոֆեսոր Մառի և պ. Թորամանյանի սքանչելի ջանքերուն շնորհիվ, երևան կուգան Անիի թաքուն մնացած հրաշալիքները, զոր մեր ոճագործ անտարբերությունն ու տգիտությունը ցարդ խավարի մեջ էր թողած, թող լույս արծուն ելլեն նաև մեր հին բանաստեղծության բոլոր անծանոթ մնացած գանձերը: Վերջապես, ատեն է, որ ճանչնանք ամեն ինչ, որ մեր հայրերը եղած են և ըրած հն, ատեն է, որ մենք մեզ ճանչնանք, որովհետև մենք, որ օտարներուն կը մեղադրենք մեռ մասին ունեցած տգիտություննին, անոնցմե շատ վար շնք մնա մեր տգիտության մեջ»<sup>19</sup>:

Այդ ամբողջ բողոքը զուտ մշակութայինից ավելի քաղաքական նպատակ էր հետապնդում: Դա կոչված էր զորացնելու ազգային դագաղումն ու ազգային հպարտությունը, հետևաբար սատարելու ազգային ինքնապահպանության, ավելին՝ ազգային միասնության գործին: Այդ խնդիրը օրակարգի հարց էր դարձել XIX դարի վերջին և XX-ի սկզբներին մեռ ժողովրդի քաղաքական դարձացման բերումով: Զոպանյանի արժանիքը հենց այն է, որ նա ճիշտ ժամանակին ըմբռնեց օբյեկտիվորեն առաջացած այդ պահանջը և «Անահիտի» էջերը տրամադրեց առաջադիմական այդ շարժրթացի ոչ միայն արտացոլմանը, այլև՝ կազմակերպմանը:

1901 թ. սկսած հանդեսում հայտնվում է «Հայ էջեր» խորապիտր, որի տակ հրատարակվում են միջնադարյան բազմաթիվ հալ ըմբռնությունները: Զուգահեռաբար հանդեսը տպագրում է քննական փայլուն ուսումնասիրությունների մի ամբողջ շարք, որոնցում հեղինակները մեկնաբանում, դիտակալորեն բացատրում ու բացահայտում են և ժողովրդին մատուցում մեր միջնադարյան գրականության գանձերը:

Առաջինը հրատարակվում է Նահապետ Քուլալի մասին: Հետաքրքրական է, որ ամեն առիթով հանդեսը կամուրջ է նետում արդիականությունը: Այս պարագայում էլ հրատարակվում են Քուլալի հետևյալ տողերը:

<sup>18</sup> Նույն տեղում, 2 տարի, № 2, էջ 39:

<sup>19</sup> Նույն տեղում, է տարի, 1905, № 9, էջ 189:

Շաշխարհս ես ի ժուռ եկալ, շրգտայ ըղորդ սիրելի,  
Ձխելքս ի վրաս բերի, գրագուկս արի սիրելի,  
Քանի բաղուկս ի բան կենա, շատ եղբայր ու շատ սիրելի,  
Բաղուկս ի բանն ընկնի, ոչ եղբայր, ոչ սիրելի:

Ընդգծումը կատարել է Ա. Չոպանյանը և հետո ասել, թե ինքը կուզենար, որ այդ տողը «ամբողջ հայության նշանաբանը դարձած տեսներ»<sup>20</sup>:

Քուշակին հաջորդում է Յրիկի, Կոստանդին Երզնկացու, Նաղաշ Հովնաթանի, Հովնաթան Հովնաթանյան նկարչի վերհանումն ու տարածումը: Երզնկացու առիթով էլ Չոպանյանը չի թաքցնում իր քաղաքական միտումը: Հրատարակելով բանաստեղծի «Ի մէջս ծովու ծփինք, ոչ նավ ունինք, ոչ նավավար» տողը, նա նկատում է, «ու խորհիլ, որ այսօր իսկ, դեռ նույն խավարին մեջ է, որ կը խարխափինք, նույն լուծը գլուխնուս վրա ծանրացած, շատ ավելի դժբախտ ու հալածված, նույնքան և ավելի պառակտված ներքնապես, ու այսօր ալ կրնանք, ավաղ, կրկնել Երզնկացիին տրտում աղաղակը՝ ոչ նավ ունինք, ոչ նավավար»<sup>21</sup>:

Երկու շրջանների «Անահիտում» էլ բավականին մեծ տեղ է գրավում ժամանակակից հայ գրականությունը: Հանդեսի ծրագիրն էր՝ առավելագույնս մերձեցնել հայության ղույզ հատվածները միմյանց գրականությունը մատուցելու ճանապարհով: Դա վերաբերում է արևելահայ և արևմտահայ, համասարապես նաև Սփյուռքի ու Խորհրդային Հայաստանի գրականություններին: Չափազանցություն չի լինի հաստատել, որ «Անահիտի» հատորները մի իսկական գրականագիտական հանրագիտարանի գեր են տանում: Նրանցում հյուրընկալվում են բոլոր հայ գրողները Աբովյանից մինչև... Շիրազ, Ալիշանից ու Պարոնյանից մինչև... Համաստեղ:

Եվ որ առավել զարմանալի է, բոլոր այդ նյութերի մեջ գրականագիտական բարձր մակարդակին և խոր վերլուծություններին զուգահեռ միշտ ընթանում է ազգային միասնությունը ապահովելու, ազգային հրամայականներն ապահովելու միտումը, որը և հենց խմբագրական ծրագիրն էր:

Խ. Աբովյանի առիթով, օրինակ, շեշտելով նրա ռուսասիրությունը, խըմբագրապետը գրում է. «Պահպանում ու զարգացում հայ ցեղին, հայ լեզվին, հայ գրականության, մուտք հայ սարրին եվրոպական քաղաքակրթության մեջ, ահա ճամբան զոր Աբովյան կր ցուցներ... Եվ Աբովյան անգին արժանիքն ունի այդ ճամբան առաջին ու դժնդակ ճիգով մը բացած ըլլալու... Եվ եթե ռուսահայ գրականությունն ավելի հայ գույն, ավելի բնիկ շեշտ ունի, ավելի գերծ է հոստորութենե և դասական ազգեցութենե, ասի կը պարտին Աբովյանին»<sup>22</sup>:

Ա. Չոպանյանը բարձր է գնահատում նաև Վենետիկի Մխիթարյանների կատարած, իր ժամանակի համար մեծ աշխատանքը հայ ժողովրդի պատմության, աշխարհագրության, հայ լեզվի բառարանների ստեղծման, հին ձեռագրերի հրատարակության, մեծաթիվ թարգմանությունների, մտավորական կադրերի պատրաստման և ուրիշ բնագավառներում: Այդ ամենը յուրովի աղգակերտիչ բնույթի էր, գտնում է նա:

«Անահիտի» էջերում հաճախակի տպադրվում են Սիամանթոն, Վարուժանը, Թեքեյանը, Ջապել Եսայանը և շատ ուրիշ ժամանակակից գրողներ: Հանդեսը գրական տաղանդի կատարելագործման մի տեսակ դպրոցի դեր էր տանում: Իսկ խմբագրապետն էլ ուսուցչի իր դերը երբեմն լրացնում էր անձնական նամակներով: Հետաքրքրական է, օրինակ, թե ինչ խորհուրդներ էր նա տալիս Վարուժանին: «Կարդացա՞՞ծ եք արդյոք Բարբիեի «Աստվածային Յամբերը» և Հյուգոյի «Հատուցումները»: Կարդացեք: Չեք հոգիին մեջ

20 Նույն տեղում, Կ տարի, 1902, № 9, էջ 195:  
21 Նույն տեղում, Ը տարի, 1906, № 6—7, էջ 106:  
22 Նույն տեղում, Ա տարի, 1898, № 2, էջ 56:

անոնց քնարին պաղպատր կա ի բնի, բայց այդ ազնիվ սրտմտության մեծ երգերուն ընթերցումը կրնա ձեր ներշնչումը խրախուսել և ձոխացնել»<sup>23</sup>։ Այսպիսի հանձնարարականը ինքնին հետաքրքրական է։ Չոպանյանը հրավիրում է Վարուժանին ներշնչվել 1830 թ. հուլիսյան հեղափոխության ազատության և ըմբոստության ոգով շնչող «Յամբերով», հավասարապես նաև 1848 թ. հեղափոխությանը նվիրված «Հատուցումներ» ժողովածուով։

Երկրորդ շրջանի «Անահիտում» էլ շարունակվում են արդեն մշակված ավանդույթները։ Հանդեսը չի դադարում հայ գրողների ժամադրավարը լինելուց, նրա էջերում հրատարակվում են (ինքնուրույն սահղծադրծություններ, կամ այդ հեղինակների մասին ասված խոսքով) Համաստեղն ու Վահե Հակը, Շահնուրն ու Որբունին, Մանուշյանն ու Սեման, Չարենցն ու Մահարին, Արմենն ու Նորենցը, Գ. Սարյանն ու Ն. Ջարյանը։ Իսկ երբ Չոպանյանը կարգում է Շիրազի «Գարնանամուտը», «Սիամանթոն ու Խջեգարեն», գրում է, թե ինքը ունեցել է «Հայ նոր ու գմայլելի բանաստեղծի բերկրառիթ հայտնությունը, որը, ըստ իրեն, «Երևանի և ամբողջ սալխարճի հայ բանաստեղծներուն մեջ ինքնուրույն տեղ մը դրավելու արժանի ներշնչյալ հմայիչ քնարհորգակ մըն է»<sup>24</sup>։

«Անահիտում» Ե. Չարենցին նվիրված հատուկ ուսումնասիրություն չկա, թեպետ հաճախ է տրվում մեծ բանաստեղծի անունը խորին գնահատանքով ու դժոխանակություններով։ Մինչ երկրորդ շրջանի «Անահիտի» երևումը արդեն իսկ Չոպանյանը հանդես էր եկել զրականագիտական հմուտ մե ակնարկով, որը առաջիննեերից մեկն էր Սփյուռքում և որի պարունակած գնահատականներն էլ երևում էին ավելի ուշ լույս տեսնող հանդեսում։ Չարենցի երևումը Չոպանյանը անվարան կապում է Հոկտեմբերյան հեղափոխության հետ։ Բանաստեղծի գործերը, ըստ նրա, «ամենն զորեղ ու անձնադրոշմ արտահայտություններն են Չարենցի, էջեր, ուր ամեն ինչ, մտածում ու ձև, ստեղծագործությունն է հեղինակին, մարդկային պատմության արտասովոր շրջանի մը ուղղակի ներգործության տակ երկնված այդ մեծ շրջանին հոգին արտահայտելու համառ հարու երած ուժն ու շունչն ունեցող քերթողի մը կողմն, որ խառնվածքի հաղվագյուտ բարդություն մը Հայնեի մը քնարական սրամտությունը կմխտցնեն Երհարնի մը դյուցազններգական ամենի ավյունին»<sup>25</sup>։

«Անահիտ» գույգ շրջաններում էլ մեծաթիվ էջեր են տրամադրվել արվեստի հարցերին, մասնավորապես, գեղանկարչությանը և երաժշտությանը։ Ընդգրկվել են Իտալական վերածննդի գործիչներից մինչև ժամանակակից ֆրանսիական գեղանկարչության առաջնակարգ հեղինակները, մատուցվել են մեծ թվով ցուցահանդեսներ։ Ուշադրության կենտրոնում գտնվել է հայ գեղանկարչությունը, և հատկապես էղզար Շահինը։

Այս բնագավառում «Անահիտի» ամենամեծ ծառայությունը կոմիտասի լուրատեսակ «հայտնագործությունն» էր։ 1901 թ. «Անահիտում» տպագրված «Կոմիտաս վարդապետը» հոդվածը հայ մամուլում հրատարակված առաջին լուրը ու խոր վերլուծակունն էր մեծ արվեստագետի մասին։ Չոպանյանի աված գնահատականները դառձան դասական և բաղմիցս կրկնվելին ու հիմնավորվելին հետախնու երևայած գրեթե բոլոր հրապարակությունների մեջ։ «Ինձի կր թվի, որ ինքն այն մարդն է, որ անհրաժեշտ էր, որպեսզի հայ երաժշտությունը արմատապես վերանորոգվի իր աղավաղումեն և անկումեն, ե որպեսզի ան ծունդանա Սյուսույի երաժշտադետներուն և համաշխարհային երաժշտությունը մեջ սկսի զրավել այն տեղը, որուն արժանի է և դոր շունի գեղ»<sup>26</sup>։

<sup>23</sup> Գ ա ն ի ե լ Վ ա ր ու ժ ա ն. Նամականի. Երևան, 1965, էջ 232։

<sup>24</sup> «Անահիտ», է տարի, 1936, № 5, էջ 30։

<sup>25</sup> «Անահիտ», 1923, № 21։

<sup>26</sup> «Անահիտ», Գ տարի, 1901, № 6—7, էջ 142։



«Անահիտ» հանդեսի լուսավորական ծրագրի կարևոր բաղադրիչներից էր ժամանակաշրջանի հայ դիտության նվաճումների պրոպագանդը և դիտության գործիչների կյանքի ու գործունեության մասին ընթերցողին լուսաբանելը: Արկրորդ շրջանում հանդեսի էջերում հաճախ են հյուրընկալվել կենսաբան նր. Սանյկյանը, որը հետազայում ընտրվեց Հայաստանի Կիտոսթյունների Ակադեմիայի արտասահմանյան անդամ, և բժիշկ Պողոս Քոլոյանը: Հատկապես մեծ յարան ունեին բժշկի ելույթներն ու խորհուրդները ժողովրդի առողջապահության զանազան հարցերի շուրջ:

Սի հանգամանք ևս: Հանդեսը չի վարանել գործածելու սուր քննադատական լեզու: նույնիսկ համազգային հեղինակությունների հասցեին, երբ նուան ոճի համար առարկայական հարկ էր առաջանում: Այդպես պատահեց, օրինակ, Գարասկղլին, երբ անհրաժեշտություն զգացվեց պաշտպանել էջ-սխառնի Սայր Տաճարի որմնակարները, որոնք Հովնաթանյան ընտանիքի ստեղծագործությունն էին: Չոպանյանը հանդես եկավ նույնիսկ Խրիմյան Հայրիկի դեմ:

Իսկ քաղաքական հակառակորդների նկատմամբ Չոպանյանը հաճախ գիմում էր երգիծանքին, երբեմն նույնիսկ՝ ոչնչացնող սարկազմին: Արդեն իսկ նման ոճը բնութագրական էր սփյուռքահայ մամուլի համար: Հազվադեպ չէին հենց իրեն՝ Ա. Չոպանյանին և «Անահիտին» անվանարկող նյութերը ժամանակի մամուլում:

Գեղանկարչության, քանդակագործության, ճարտարապետության, երաժշտության և մի շարք ուրիշ բնագավառների անդրադառնալիս, հանդեսը իր զույգ շրջաններում էլ առավելապես դիմում է «Քրոնիկի» ժանրին, որը նրա էջերում հասնում է կատարելության և կարող է հանդեսի համար տանել ժանրային յուրատեսակ անձնագրի դեր:

Մեր մամուլի պատմության մեջ «Անահիտի» գրաված կարևոր տեղը պայմանավորված է նրա հանրագիտարանային ընդգրկումով, բովանդակության խորությամբ, մատուցման ծայր աստիճան մատչելիությամբ, իր ժամանակի հետ քայլ բռնելու նախանձեղի կարողությամբ, համեմատաբար ընդարձակ յարանով և այս ամենի կուռ միասնությամբ, որը ապահովում էր նրա խմբագրի՝ Արշակ Չոպանյանի հմուտ ձեռքով և հեռուն նայող հայացքով:

## ЖУРНАЛУ «АНАИТ» 100 ЛЕТ

Доктор филол. наук К. Л. ДАЛЛАКЯН

### Р е з ю м е

Редактируемый выдающимся деятелем армянской культуры Аршаком Чобаняном журнал «Анаит» издавался в Париже в 1898—1911 гг. и в 1929—49 гг. Всю свою деятельность А. Чобанян посвятил делу победы национально-освободительной борьбы армянского народа. Он глубоко осознал объективную необходимость консолидации сил народа на этом этапе борьбы и превратил свой журнал в рупор демократической мысли. А. Чобанян пробуждал национальное самосознание и гордость, заново открыв и сделав достоянием народа бесценные творения наших предков—многие страницы средневековой армянской поэзии. Через «Анаит» армянский народ приобщался к великим культурам—русской, европейской, восточной. Именно в журнале «Анаит» был проанализирован весь ход политической мысли армянства и была доказана необходимость русской ориентации на основе принципа совпадения интересов двух народов. «Россия—это та мощь, без воли которой невозможно, что-

бы решилась судьба армян»,—писал А. Чобанян. Именно в журнале «Анант» убедительно разъяснено, что истребление армян в Турции вызвано отнюдь не непокорностью, которая якобы подстрекалась извне, а было запрограммировано в самой природе туркизма, который не терпит наличия инонационального элемента на своей территории. Принципы русской ориентации оставались незыблемыми также во второй период деятельности журнала, естественно, выражаясь в подчеркнуто положительном отношении к новой политической действительности—к Советскому Союзу и к его составной части—Советской Армении. «Анант» стал пропагандистом экономических и культурных достижений Родины. Исключительное место журнала «Анант» в истории нашей печати обусловлено его энциклопедическим характером, глубиной содержания и трезвостью мысли, крайней доступностью анализа и подачи материала, способностью шагать в ногу со временем, сравнительной широтой аудитории.